ՓՈԽԶԻՋՄԱՆ ՎՏԱՆԳԸ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ.

Եբրայեցիս 11.24–25 – Հավատով էր, որ երբ Մովսեսը մեծացավ, հրաժարվեց փարավոնի դստեր որդի կոչվելուց: Նա նախընտրեց Աստծու ժողովրդի հետ չարչարվել, քան թե միառժամանակ մեղսավոր վայելքներ ունենալ.

Ելից 5.1-3 – 1 Եւ հետո Մովսեսն ու Ահարոնը եկան եւ ասեցին փարավոնին. Այսպես է ասում Իսրայելի Տեր Աստվածը. արձակիր իմ ժողովուրդին, որ անապատում ինձ համար տօն կատարեն: 2 Եւ Փարավոնն ասաց. Եհովան ո՞վ է, որ նորա խօսքին լսեմ, և Իսրայէլին արձակեմ. Տիրոջը չեմ ճանաչում և Իսրայելին էլ թույլ չեմ տալիս: 3 Եւ նորանք ասեցին. Եբրայեցիների Աստվածն է հանդիպել մեզ. հրամա՛ն տուր, որ երեք օրվա ճանապարհ գնանք անապատում և զոհ մատուցենք մեր Տեր Աստծուն. միգուցե ժանտախտով կամ սրով հարձակվի մեզ վրա:

- *Մովսեսի կյանքը մեզ սովորեցնում է, որ հավատքը միայն Աստծուն <u>հավատալը չէ</u>: Հավատքը նաև մեղքին, աշխարհին և փոխզիջմանը «ոչ» ասելն է:*

  Աստված Մովսեսին չասաց՝ «Բանակցի՛ր փարավոնի հետ»:

  Նա ասաց. <u>Արձակի՛ր Իմ ժողովրդին</u>, որ անապատում Ինձ համար տոն կատարեն: (Ելից 5.1)

1. ԱՌԱՋԻՆ ՓՈԽՋԻՋՈՒՄԸ. «ԵՐԿՐԻ ՄԵՋ ՁՈՀ ՄԱՏՈՒՑԵՔ»

Փարավոնը կանչեց Մովսեսին ու Ահարոնին և ասաց. Գնացե՛ք, ձեր Աստծուն զո՛հ մատուցեք այս երկրում: (Ելից 8.25)

Փարավոնի առաջին առաջարկն այս էր. «Կարող եք երկրպագել ձեր Աստծուն, բայց մնացեք Եգիպտոսում»:

Փարավոնն ասում էր. «Երկրպագե՛ք, բայց մի՛ հեռացեք այն համակարգից, որի վրա ես իշխում եմ»:

- ***Այսօր նույն առաջարկը հնչում է այսպես.***

  Քրիստոնյա եղիր, բայց ապրիր աշխարհի պես:

  Եկեղեցի գնա, բայց մի հրաժարվիր մեղքից:

  Հիսուսի անունը կրի՛ր, բայց պահի՛ր աշխարհի արժեքները:

- ***Մովսեսը մերժեց այդ առաջարկը.***

  Ընդունելի չէ այդպես անել... Մենք երեք օրվա ճանապարհ պիտի գնանք անապատ և մեր Տեր Աստծուն զոհ մատուցենք, ինչպես Նա մեզ պատվիրի: (Ելից 8.26–27)

  Մովսեսը հասկացավ, որ հնարավոր չէ Աստծուն ընդունելի կերպով երկրպագել՝ միաժամանակ մնալով Եգիպտոսի ազդեցության ներքո:

- ***Դեմասը Պողոսի գործակիցն էր, բայց նրա սիրտը դարձավ դեպի աշխարհը.***

  Դեմասն ինձ թողեց՝ այս աշխարհը սիրելով: (Բ Տիմ. 4.10)

  Առաջին փոխզիջումն ասում է. «Ծառայի՛ր Աստծուն, բայց մի՛ բաժանվիր աշխարհի մտածելակերպից»:

  Մի՛ սիրեք աշխարհը և ոչ էլ այն, ինչ աշխարհի մեջ է: (Ա Հովհաննես 2.15)

  Մովսեսի պատասխանը սա էր. ***«Մենք այստեղ չենք մնալու»:***

2. ԵՐԿՐՈՐԴ ՓՈԽԶԻՋՈՒՄԸ. «ՇԱՏ ՀԵՌՈՒ ՄԻ՛ ԳՆԱՑԵՔ»

Փարավոնն ասաց. Ես ձեզ կթողնեմ, որ գնաք և ձեր Տեր Աստծուն զոհ մատուցեք անապատում, <u>միայն թե հեռու չգնաք</u>: (Ելից 8.28)

«Գնացեք, բայց շատ հեռու մի գնացեք»:

- *Այսինքն՝ «Դուրս եկեք Եգիպտոսից, բայց այնքան մոտ մնացեք, որ անհրաժեշտության դեպքում կարողանաք վերադառնալ»:*

  Սա ներկայացնում է այն քրիստոնյային, որն Աստծուն հետևում է, <u>բայց դեռ կապված է իր անցյալի հետ</u>: Նա

եկեղեցում է, սակայն սրտով շարունակում է նայել Եգիպտոսին:

- ***Ղովտը բնակություն հաստատեց Սոդոմում...***

  Ղովտը միանգամից Սոդոմ չմտավ: Սկզբում նա միայն ընտրեց Սոդոմի մոտ գտնվող բարեբեր տարածքը:

  Ղովտը բնակվեց հովտի քաղաքներում և իր վրանները խփեց մինչև Սոդոմ: Ծննդոց 13.12

- ***Փոխզիջման ընթացքը հետևյալն էր.***

  Սկզբում Ղովտը նայեց Սոդոմին:

  Հետո իր վրանները խփեց Սոդոմի մոտ:

  Ապա բնակվեց Սոդոմում:

  Վերջում Սոդոմը մտավ նրա ընտանիքի սրտի մեջ:

Փոքր փոխզիջումը ժամանակի ընթացքում կարող է դառնալ մեծ կապանք:

Հիսուսն ասաց. Հիշե՛ք Ղովտի կնոջը: (Ղուկաս 17.32 x5)

- *Իսրայելացիները ֆիզիկապես դուրս եկան Եգիպտոսից, բայց հետագայում նրանցից շատերի սրտերը դեռ Եգիպտոսում էին.*

Մենք հիշում ենք Եգիպտոսում մեր ձրի կերած ձկները, վարունգները, սեխերը, պրասները, սոխերն ու սխտորները: (Թվոց 11.5)

Հիսուսն ասաց. Ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել: (Մատթեոս 6.24)

- *Աստծուն մոտենալու համար պետք է պատրաստ լինենք հեռանալ այն ամենից, ինչը մեզ կապում է հին կյանքի հետ:*

  Եթե մեկը Քրիստոսի մեջ է, նա նոր արարած է. հներն անցան, և ահա ամեն բան նոր եղավ: (Բ Կոր. 5.17)

  Փարավոնն ասում է. «Հիսուսին հետևիր, բայց շատ հեռու մի գնա»:

  Եթե մեկը կամենում է Իմ հետևից գալ, թող իր անձն ուրանա, ամեն օր իր խաչը վերցնի և Իմ հետևից գա: (Ղուկաս 9.23)

  Ոչ ոք, ով ձեռքը մաձի վրա է դնում և հետ նայում, Աստծու արքայությանը հարմար չէ: (Ղուկաս 9:62)

  Աստծուն հետևելը միայն նախկին կյանքից դուրս գալը չէ: Մենք պետք է նաև փակենք վերադարձի ճանապարհը:

- *Եղիսեի ծառա Գեեզին հետ դարձավ դեպի հարստությունը*

Եղիսեն հրաժարվեց Նեեմանի նվերներից, բայց Գեեզին գաղտնի <u>վազեց Նեեմանի հետևից</u> և ստացավ արծաթ ու հագուստ:

Գեեզին՝ Աստծու մարդու՝ Եղիսեի ծառան, ասաց. "Ահա իմ տերը խնայեց այս ասորի Նեեմանին՝ նրա բերածը ձեռքից չընդունելով... <u>ես նրա հետևից կվազեմ</u> և նրանից մի բան կվերցնեմ : (Դ Թագավորաց 5.20)

Գեեզին ծառայում էր մարգարեի կողքին, բայց նրա սիրտը կապված էր նյութական աշխարհի հետ: Նրա փոխզիջման հետևանքով Նեեմանի բորոտությունը կպավ նրան և նրա սերնդին:

3. ԵՐՐՈՐԴ ՓՈԽԶԻՋՈՒՄԸ. «ԹՈՂ ՄԻԱՅՆ ՏՂԱՄԱՐԴԻԿ ԳՆԱՆ»

Փարավոնը նրանց ասաց. Ովքե՞ր են գնալու: – Ելից 10.8

Մովսեսը պատասխանեց. Մենք գնալու ենք մեր երիտասարդներով և մեր ծերերով, մեր տղաներով և մեր աղջիկներով, գնալու ենք մեր հոտերով և մեր արջառներով, որովհետև դա Տիրոջ տոն է մեզ համար: (Ելից 10.9)

Բայց փարավոնն ասաց.

Ոչ այդպես, այլ գնացե՛ք դուք՝ տղամարդիկդ, և պաշտե՛ք Տիրոջը...: (Ելից 10.11)

- *Ընտանիքը և հաջորդ սերունդը ետևում թողնելու փոխզիջումը:*

  Այսօր հոգևոր պատերազմը ոչ միայն անհատի, այլև ընտանիքի դեմ է:

- ***Հեղի քահանան չկանգնեցրեց իր որդիներին***

  Ինչո՞ւ ես քո որդիներին Ինձանից ավելի պատվում: (Ա Թագավորաց 2.29)

- ***Հուդայի Հովաս թագավորը***

  Քանի դեռ Հովիադա քահանան կենդանի էր, Հովասը ճիշտ ընթացքի մեջ էր:

  Հովասն իր կյանքի բոլոր օրերին, քանի դեռ Հովիադա քահանան նրան խրատում էր, Տիրոջ աչքին ուղիղն արեց: Դ Թագավորաց 12.2

  Բայց Հովիադայի մահից հետո Հովասը լսեց Հուդայի իշխաններին և հեռացավ Տիրոջից:

  «Այս խոսքերը, որ այսօր քեզ պատվիրում եմ, քո սրտում թող լինեն: Դրանք սովորեցրո՛ւ քո որդիներին»: Երկրորդ (Օրինաց 6.6-7)

  Հեսուն նույնպես հայտարարեց.

«Ես և իմ տունը Տիրոջն ենք ծառայելու»: (Հեսու 24.15)

- *Մովսեսի պատասխանը վճռական էր.* ***«Բոլորս ենք գնալու»:***

4. ՉՈՐՐՈՐԴ ՓՈԽԶԻՋՈՒՄԸ. «ՁԵՐ ՀՈՏԵՐԸ ԹՈՂ ՄՆԱՆ»

Փարավոնը կանչեց Մովսեսին և ասաց. Գնացեք և պաշտեք Տիրոջը. թող մնան միայն ձեր հոտերն ու արջառները. ձեր ընտանիքներն էլ թող գնան ձեզ հետե: (Ելից 10.24)

- *Այժմ փարավոնը պատրաստ էր բաց թողնել ամբողջ ժողովրդին, <u>բայց ցանկանում էր պահել նրանց ունեցվածքը</u>:*

  Այսիքն, հոգևոր կյանք առանց զոհաբերության:

  Փարավոնի առաջարկն այս էր. Դուք կարող եք անձամբ գնալ, բայց ձեր ունեցվածքը թող մնա իմ իշխանության տակ:

  Սատանան չի անհանգստանում այն երկրպագությունից, որը մարդուց ոչինչ չի պահանջում: Սակայն իրական երկրպագությունը միշտ ունի զոհաբերության գին:

  Մովսեսը պատասխանեց.

*Մեր հոտերն էլ մեզ հետ պիտի գնան. դրանցից **մի կճղակ անգամ չպիտի մնա**, որովհետև դրանցից ենք վերցնելու մեր Տեր Աստծուն զոհելու համար: (Ելից 10.26)*

***«Ոչ մի կճղակ չպիտի մնա»** նշանակում է՝ ամեն բան պատկանում է Աստծուն:*

Քո կյանքը, ընտանիքը, ժամանակը, պարգևները կարողությունները և ունեցվածքը պատկանում են Աստծուն:

- *Անանիան և Սափիրան ունեցվածքի հարցում խաբեցին*

Անանիա՛, ինչո՞ւ սատանան քո սիրտը լցրեց, որ դու Սուրբ Հոգուն ստես և արտի գնից մի մասը քեզ պահես: (Գործք Առաքելոց 5.3)

Նրանց մեղքը միայն գումար պահելը չէր: Նրանք ուզում էին ամբողջական նվիրումի պատիվը՝ առանց ամբողջական նվիրումի գնի:

ԻՆՉՈ՞Ւ Է ՓՈԽԶԻՋՈՒՄՆ ԱՅԴՔԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ

- ***Փոխ-զիջումը սովորաբար սկսվում է փոքր զիջումով:***

Մի՞թե չգիտեք, որ մի փոքր խմորն ամբողջ զանգվածն է խմորում: (Ա Կորնթացիս 5.6)

Փոքր փոխզիջումը կարող է դառնալ մեծ կապանք: Այն, ինչ մենք այսօր հանդուրժում ենք, վաղը կարող է իշխել մեզ վրա:

- *Սամսոնի անկումը մեկ օրում չկատարվեց: (Դատ.16):*

ՄՈՎՍԵՍԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳԱՂՏՆԻՔԸ

Նա համբերեց՝ կարծես Անտեսանելիին տեսնելով: Եբրա. 11.27

- *Մովսեսը կարողացավ մերժել փարավոնի առաջարկները, որովհետև նա տեսնում էր մի բան, որը փարավոնը չէր տեսնում:*

  Նայելով Հիսուսին՝ հավատի զորագլխին և կատարողին: Եբրայեցիս 12.2

- *Մենք նույնպես երբեք չպետք է փոխզիջման գնանք մեղքի և սատանայի հետ: Աստված փրկեց Իսրայելին Եգիպտոսից, և Քրիստոս Իր արյամբ մեզ ազատել է մեղքի իշխանությունից:*

  Արդ, եթե Որդին ձեզ ազատի, ճշմարտապես ազատ կլինեք: Հովհաննես 8.36

  Փրկությունը Եգիպտոսից միայն դուրս գալը չէ: Փրկությունը նաև Եգիպտոսը մեր սրտից դուրս հանելն է:

  Այսօր Տերը մեզ կանչում է ամբողջական նվիրումի.

Ոչ մի փոխզիջում: Ոչ մի վերադարձ դեպի աշխարհ: Ոչ մի ընտանիքի անդամ ետևում: Ոչ մի կճղակ Եգիպտոսում: Ես և իմ տունը Տիրոջն ենք ծառայելու:

«Մենք այստեղ չենք մնալու»:

«Մենք հետ չենք դառնալու»:

«Բոլորս ենք գնալու»:

«Ոչ մի կճղակ չպիտի մնա»

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ